

բացատրութիւնը յաճախ գործադրուած է: Դանիէլ վանհական այդ անունը կուտայ 1106–1107ին ու կը գրէ, խորանին մէկ կողմը, պատին արտաքին կողմը կը գտնուի «երկրին պորտը» որ փոքրիկ շէնքի մը կամարովը ծածկուած է, ուր Գրիստոս կը ներկայացուի մոզայիք արձանագրութեամբ մը՝ «Լժ ոտքերուս զարշապարը կը ծառայէ իբր չափ երկինքի եւ երկրի համար» (P. T. S. Daniel, էջ 13): Sandys որ 1611ին Երուսաղէմ կը գտնուէր, կը գրէ. «Դէպի արեւմտեան ծայրը, իւրաքանչիւր կողմէն հաւասարապէս հեռու տեղւոյ մը վրայ կար փոքրիկ փոս մը, որուն համար կ'ըսեն թէ երկրի պորտն է, և կը ջանան հաստատել զայն Ս. Գրքի խօսքով. «Աստուած, որ արար ըզփրկութիւն ի մէջ երկրի»»: Sandysի այս «փոքրիկ փոսը» խիստ տարբեր է Արգուլֆի նկարագրութեան «բարձր սիւն»էն: Ներկայիս՝ ան աման մըն է՝ դուրս ելած քարով մը. բայց Herr Schickի գծագրութիւնը ցոյց կուտայ թէ օրհնուած ջուրը կրնայ անկէ թափիլ և գտնել ընդունարան մը (P. E. F. 1888, էջ 260–63):

Seawulf կը կարծէ թէ նոյն տեղը այն վայրն է ուր մեր Տէրը յետ յարութեան երեւցաւ Մարիամ Մագդաղենացիին՝ երբ ան արտասուածոր աչքերով կը փնտռէր եւ կը կարծէր թէ Յիսուս պարտիզպանն էր (E. T. P. էջ 38):

ԺԲ. ՅՈՎԱՆՔ ԱՐԻՄԱՅԱՑԻՆ ԳԵՐԵՋՄԱՆԸ

Սոյն մատուռին դիմացը դուռ մը կայ որ երեք խորշի կամ խուցի բաժնուած է մէջ առ մէջ. առաջինը նախագաւիթ մըն է, ուրկէ աստիճաններով Հայոց ժամարար միաբաններու ննջարանը կ'ելլուի, եր-